Միայն յիշատակ փոշեաւ հնացած,
Որք թողեալ անտէր զիս ի սուգ ի լաց,
Փոխեցան յերկինս — ի կեանս անանց,
Յոթեւանս իւրեանց։

11 Երկար պատմելով քեզ իմ թախիծը,
Դեռ շատանում է սրտիս կսկիծը,
Գնա՛ ընթացիր՝ դու դէպի յառաջ,
Արագ քայլելով զառ ի վայր վաղքաջ,
Գետոյն ընդառաջ։

12 Գնա՛ պատանի, դու Հայ պատանի,
Այդ ճանապարհաւ, որ քեզ կը տանի,
Այդ քո առջեւդ նրան կտեսնես,
Որ զիս կսղբայ միշտ յաւերով պէս պէս,
Իսպառ դառնապէս։

ԽՈՐԷՆ ԳԱՀԱՆԱՑ ՄԻՐՋԱԲԵԿԵԱՆՑ

ՀՐԱՒԷՐ

Կարդալով Սոխակ Հայաստանի երգարանի մէջ (տպած 1871) Բաղուի Խորէն քահանայ Միրզաբէկեանցի գրած Մէյսարու սուրբ Աստուածածնի վանքի բերանից հրաւէրն առ Շամախեցիս, և տեսնելով որ ցէր Խորէնը միայն արտաքին մասն է նկատել և նկարագրել, այն է վանքի նիւթական մնասն, զորս արօրը. գութանը, այգին և վարելահողը, եկամուտն ու արդիւնքը, եւայլն, կամեցայ վանքի իսկական ցաւը յայտնել, հոգեւոր և բարոյական մնասը, իրաւացի բողոքն ու տրտունջը յիշեցնել այն անշնորհք Շամախեցւոց, որք խորդ և անառակ որդւոյ նման իրենց հոգեւոր մայրը, սուրբ եկեղեցին ուրացած, մոռացած և 1900 տարւայ իրենց երջանիկ նախնեաց աւանդն ու կտակը սրտերից հանած՝ թափառում են օտարի դռներին՝ իրենց հոգւոյ փրկութիւն մուրալոյ. խեղճ Շամախեցիք, ո՞ւր էք մոլորվում, էր էք թողնում ձեր բարեպաշտ և քաջ